ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ



Գազամատակարարման համակարգի ընկերությունների սակագները հաշվարկվում և սահմանվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով ամրագրված սկզբունքների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագների հաշվարկման մեթոդիկայի և սակագների սահմանման (վերանայման) կարգի հիման վրա:

ՀՀ գազամատակարարման համակարգը

ГАЗПРОМ АРМЕНИЯ

- ✓ Բնական գազի ներկրում,
- ✓ Օպերատիվ տեխնոլոգիական կարգավարում,
- ✓ Բնական գազի բաշխում եւ վաճառք:

ТРАНСГАЗ

- ✓ Բնական գազի փոխադրում:

ԳԱԶԱՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ՝

- շահագործվող գազատարներ՝ 1594,4 կմ,
- գազաբաշխիչ կայաններ՝ 75 հատ,
- չափիչ հանգույցներ՝ 21 հատ,
- ԷՊԿ-ներ՝ 182 հատ,
- գծային փականային հանգույցներ՝ 231 հատ,
- Աբովյանի ԳՍՊԿ՝ 21 ստորգետնյա հորերով:

ԳԱԶԱԲԱՇՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ՝

- շահագործվող գազատարներ՝ 15827,1 կմ,
- գազակարգավորիչ կետեր՝ 2638 հատ,
- միավոր անհատական գազակարգավորիչներ՝ 8522 հատ,
- գլխամասային չափիչ հանգույցներ՝ 1433 հատ,
- ԷՊԿ-ներ՝ 326 հատ,
- բաժանորդների քանակ՝ շուրջ 754 000:

- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից գազամատակարարման համակարգի օպերատորի, բնական գազի բաշխման և «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից բնական գազի փոխադրման ծառայությունների մատուցման սակագները վերջին անգամ վերանայվել և ուժի մեջ են մտել 2020 թվականի հուլիսի 19-ից:
- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագները վերջին անգամ վերանայվել և ուժի մեջ են մտել 2020 թվականի հուլիսի 19-ից, բացառությամբ ՋԷԿ-երի, որոնց համար՝ 2020 թվականի օգոստոսի 1-ից:



Գազամատակարարման համակարգի ընկերությունների սակագների 2022 թվականին վերանայման անհրաժեշտությունը

- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն 13.01.2022թ. դիմել է ՀԾԿՀ՝ սպառողներին վաճառվող բնական գազի սակագների վերանայման հայտով: Ընկերությունն առաջարկել է բոլոր սպառողների համար սահմանել միասնական 282.6 ԱՄՆ դոլար/հազ. խմ կամ 135 648.85 դրամ/հազ. խմ սակագին՝ ՌԴ-ից ներկրվող բնական գազի 8500 կկալ/խմ ստորին այրման ջերմության պայմաններում, որը գործող սակագների հաշվարկային միջին կշռված մեծության նկատմամբ ավել է 6%-ով:
- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սակագների վերանայման հայտը սահմանված կարգով ՀԾԿՀ-ի կողմից ընդունվել է ուսումնասիրության և 19.01.2022թ. ամբողջությամբ տեղադրվել ՀԾԿՀ-ի կայքում՝ հնարավորություն ընձեռելով սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններին և շահագրգիռ այլ կողմերին ծանոթանալու հայտին, ներկայացնելու իրենց առաջարկները և ստանալու պարզաբանումներ:
- ՀԾԿՀ-ն 21.01.2022թ-ից սեփական նախաձեռնությամբ սկսել է նաև գազամատակարարման համակարգի օպերատորի, բնական գազի փոխադրման և բաշխման ծառայությունների սակագների վերանայման գործընթաց՝ հաշվի առնելով ներդրումային ծրագրերի կատարումը, ընկերությունների տնտեսական գործունեության վրա ազդող այլ գործոնները և սպառողներին վաճառվող բնական գազի սակագների վերանայման հայտը:

Գազամատակարարման համակարգի ընկերությունների սակագների 2022 թվականին վերանայման անհրաժեշտությունը

Սպառողներին վաճառվող բնական գազի սակագների վերանայումը հիմնականում պայմանավորված է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Էքսպորտ» ՍՊԸ-ի միջև 29.12.2021թ. ստորագրված ՀՀ բնական գազի առաքման 02.12.2013թ. №02-13-04 պայմանագրի №105 լրացուցիչ համաձայնագրի կիրառմամբ, համաձայն որի 2022 թվականի ապրիլի 1-ից ՀՀ ներկրվող բնական գազի գինը 7900 կկալ/խմ-ի համար սահմանվել է 165 ԱՄՆ դոլար/հազար խմ և 8500 կկալ/խմ-ի համար հաշվարկային գինը՝ 177.53 ԱՄՆ դոլար/հազար խմ:



Дополнительное Соглашение №105
к Контракту №02-13-04 от 02 декабря 2013 г.
на поставку природного газа в Республику Армения
в 2014-2021 годах

г. Санкт-Петербург «29» октября 2021 г.

ООО «ГАЗПРОМ ЭКСПОРТ», Российская Федерация, (далее по тексту «Продавец»), в лице начальника Управления по работе на рынках СНГ Департамента экспорта газа в отрасль южного транспортного направления и СНГ Ю.А. Орлова, действующего на основании доверенности №13-2/13д от 17.01.2020, и

ЗАО «ГАЗПРОМ АРМЕНИЯ», Республика Армения, (далее по тексту «Покупатель»), в лице Председателя Правления - Генерального директора Г.Х. Талевосяна, действующего на основании Устава,

при совместном упоминании Стороны,

договорились продлить срок действия Контракта №02-13-04 от 02.12.2013 (далее «Контракт») и заключили настоящее Дополнительное соглашение №105 к Контракту о нижеследующем:

1. В названии Контракта, а также в пунктах 2.1. и 2.2. Контракта заменить формулировку «в 2014-2021 годах» на формулировку «в 2014-2022 годах».

2. Исключительно для поставок Природного газа в период с 01.11.2021 по 31.12.2022 включительно Стороны договорились установить цену на Природный газ по Контракту (Р) равную 165,00 долларам США за 1000 кубических метров при низшей теплотворной способности, равной 7900 ккал/куб. м.

3. Исключительно для поставок Природного газа в период с 01.11.2021 по 31.12.2022 включительно Стороны договорились не применять положения пунктов 8.1.1. и 8.1.2. Контракта.

4. Изложить пункт 4.2 Контракта в следующей редакции:

«4.2. Определение технических параметров Природного газа, замер количества, температуры, давления, а также отбор проб Природного газа производятся в Пункте поставки-приема – на ГИС Красный Мост. Технические параметры, необходимые для определения средневзвешенной фактической месячной низшей теплотворной способности для целей п. 8.2. настоящего Контракта определяются потоковым хроматографом на ГИС Красный Мост, до ввода в действие потокового хроматографа на ГИС Красный Мост или в случае его неисправности анализ Природного газа производится на ГИС Кохб (Республика Армения)».

5. Изложить пункт 8.2 Контракта в следующей редакции:

«8.2. Фактическая цена Природного газа (P_x) по Контракту устанавливается при низшей теплотворной способности, равной 8500 ккал/куб. м, по следующей по формуле:

$P_x = P_p * Q_{факт} / 8500$, где:

P_x – фактическая цена Природного газа, долл. США за 1 000 куб. м;

P_p – расчетная цена Природного газа, в долл. США за 1 000 куб. м, равная:

$P_p = P * 8500 / 7900 = 177,53$ долл. США за 1 000 куб. м;

$Q_{факт}$ – средневзвешенная фактическая месячная низшая теплотворная способность. Для целей настоящей Статьи $Q_{факт}$ определяется потоковым хроматографом, установленным на ГИС Красный Мост, до ввода в действие потокового хроматографа на ГИС Красный Мост или в случае его неисправности анализ Природного газа производится на ГИС Кохб и удостоверяется уполномоченной в установленном законодательством Республики Армения порядке организацией и представляется Продавцом

- Նշված №105 լրացուցիչ համաձայնագրով պայմանավորված՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն առաջարկել է սակագների հաշվարկներում ներկրվող բնական գազի գինը ներառել 8500 կկալ/խմ-ի համար ամրագրված 177.53 ԱՄՆ դոլար/հազար խմ մեծությունը, իսկ գործող սակագնի հաշվարկներում ներառված մյուս ցուցանիշները թողնել անփոփոխ:
- Նշված №105 լրացուցիչ համաձայնագրի համաձայն՝ ներկրվող բնական գազի փաստացի գինը յուրաքանչյուր ամսվա համար կորոշվի տվյալ ամսում բնական գազի փաստացի միջին կշռված ստորին այրման ջերմության ցուցանիշից և 8500 կկալ/խմ-ի համար սահմանված հաշվարկային գնից ելնելով՝ այն համամասնորեն նվազեցնելով կամ ավելացնելով: Ուստի, նշված համաձայնագիրն, ըստ էության, չի սահմանափակում սպառողներին վաճառվող բնական գազի սակագների հաշվարկներում կիրառել բնական գազի ստորին այրման ջերմության կանխատեսվող միջին ցուցանիշ՝ հիմնված նախորդ տարվա փաստացի (8389 կկալ/խմ) մեծության վրա, որը հետագայում կճշգրտվի:

7900 կկալ/խմ	8500 կկալ/խմ	8389 կկալ/խմ
↓	↓	↓
165.0$/հազ. խմ	177.53$/հազ. խմ	175.21$/հազ. խմ

- Բնական գազի սակագների վերանայման հայտի ուսումնասիրության շրջանակում իրականացվել է նաև գազամատակարարման համակարգի սակագների հաշվարկներում ներառված ցուցանիշների փոփոխությունների վերլուծություն: Մասնավորապես, տեղի են ունեցել սպառման ծավալների աճ, շահագործման և պահպանման ծախսերի որոշակի ավելացում, ինչպես նաև կատարվել են ներդրումներ և առկա է սակագների հաշվարկում կուտակված մաշվածություն:
- Աշխատանքային քննարկումների արդյունքում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն առաջարկել է գազի ստորին այրման ջերմությունից բացի այլ գործոնների վերանայման անհրաժեշտության դեպքում հիմք ընդունել 2020 թվականին մշակված, շահագրգիռ կողմերի հետ քննարկված և ընկերության (այդ թվում՝ «Գազպրոմ» ՀԲԸ-ի) հետ համաձայնեցված սակագների հաշվարկման մեթոդական մոտեցումները, որոնց նպատակն է որոշակի ժամանակահատվածում ծախսերի և այլ ցուցանիշների ֆիքսման միջոցով խրախուսել ծախսերի օպտիմալացումը, կորուստների կրճատումը, համակարգի զարգացմանն ուղղված ներդրումների իրականացումը՝ դրանց արդյունքները տվյալ ժամանակահատվածի ավարտին ուղղելով սպառողների սակագների մեղմմանը:

- Խթանիչ սակագնային քաղաքականություն նախատեսող մոտեցումները չեն հակասում սակագների գործող մեթոդիկայի դրույթներին, 2 դեպքում էլ ընդամենը ծախսերի միջև էական տարբերություն առկա չէ և նոր մոտեցման պարագայում սակագների հաշվարկներից նվազեցվում է նաև նախորդ ժամանակահատվածում սպառման ծավալների փոփոխության արդյունքում առաջացած լրացուցիչ օգուտը՝ ունենալով դրական ազդեցություն ներկայիս վերանայվող սակագների վրա:
- Ուստի, սպառողներին վաճառվող բնական գազի սակագների հաշվարկներն իրականացվել է խթանիչ սակագնային քաղաքականություն նախատեսող նոր մոտեցումներին համապատասխան: Մասնավորապես՝
  - շահագործման և պահպանման ծախսերը նախատեսվել են գործող սակագներում նախատեսված մեծություններին համապատասխան՝ սղաճով ճշգրտելով միայն նյութական և նորոգման ծախսերը (սղաճը կազմել է 7,1%),
  - կանխատեսվող սպառման ծավալներն ավելացվել են նախորդ տարվա աճին համապատասխան՝ հաշվի առնելով ՋԷԿ-երի գործող սակագներում նախատեսված բնական գազի սպառման ծավալները (աճը կազմել է 21.9 մլն խմ),
  - կուտակված մաշվածության նվազեցման և 2020-2021թթ. կատարված ներդրումների փոխահատուցման արդյունքում մաշվածության և շահույթի գումարների էական փոփոխություն տեղի չի ունենում,
  - նախորդ ժամանակահատվածում սպառման ծավալների փոփոխության արդյունքում լրացուցիչ օգուտը կազմում է 2122.3 մլն դրամ, որը նվազվում է սակագների հաշվարկից:

- Բնական գազի սակագների վերանայման հայտի ուսումնասիրության ընթացքում սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների խնդրանքով 17.02.2022թ. կազմակերպվել է նախնական քննարկում վերջիններիս ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ժամանակ հնչել են հարցեր և տրվել պարզաբանումներ:
- Սակագների վերանայման աշխատանքների ամփոփման արդյունքում ՀԾԿՀ-ի աշխատակազմը կատարել է իր հաշվարկները, որոնք 21.02.2022թ. տեղադրվել են ՀԾԿՀ-ի պաշտոնական կայքում՝ նախատեսելով աշխատանքային քննարկում շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ:
- «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ 23.02.2022թ. տեղի ունեցավ աշխատանքային քննարկում, որի ժամանակ ներկայացվեց սակագների վերանայման գործընթացը, այդ թվում՝ ՀԾԿՀ-ի աշխատակազմի հաշվարկները, հնչեցին հարցեր և տրվեցին պարզաբանումներ:

Սակագների վերանայման հայտերով ներկայացված և ՀԾԿՀ աշխատակազմի կատարած հաշվարկների համեմատական

առանց ԱԱՀ-ի

№	Անվանումներ	Չափի միավոր	"Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ-ի հայտ	ՀԾԿՀ աշխատակազմի առաջարկ	Տարբերություն
1	**Անհրաժեշտ հասույթ**	**մլն դրամ**	**234 198.72**	**232 577.62**	**-1 621.10**
1.1	*Ներկրված գազի արժեք*	*մլն դրամ*	*186 575.41*	*186 176.53*	*-398.88*
1.2	*Նորոգման և նյութական ծախսեր*	*մլն դրամ*	*7 017.52*	*7 515.76*	*+498.24*
1.3	*Աշխատավարձ և այլ ծախսեր*	*մլն դրամ*	*17 299.72*	*17 299.72*	*0.0*
1.4	*Մաշվածություն և շահույթ*	*մլն դրամ*	*25 549.27*	*25 567.20*	*+17.93*
1.5	*Անհուսալի դեբիտորական պարտքեր*	*մլն դրամ*	*508.37*	*534.93*	*+26.56*
1.6	*Փոխհատուցման գումար*	*մլն դրամ*	*0.0*	*-2 122.26*	*-2 122.26*
1.7	*Գազի փոխադրումից ստացվող այլ եկամուտ*	*մլն դրամ*	*-2 751.57*	*-2 394.26*	*+357.31*
2	**Բնական գազի ներկրում**	**մլն խմ**	**2 189.48**	**2 213.73**	**-24.25**
	Բնական գազի կորուստներ	*մլն խմ (%)*	*110.95 (5.07%)*	*112.24 (5.07%)*	*-1.29 (0%)*
	Բնական գազի սեփական կարիքներ	*մլն խմ*	6.71	7.81	*+1.1*
3	**Բնական գազի օգտակար առաքում**	**մլն խմ**	**2 071.82**	**2 093.68**	**+21.86**
4	***Բնական գազի ներկրման գին***	**$/հազ. խմ**	***177.53***	***175.21***	***-2.32***
5	***Գազի ստորին այրման ջերմություն***	***կկալ/խմ***	***8500***	***8389***	***-111.0***
6	**Միադրույք հաշվարկային սակագին (ԱԱՀ-ով)**	**$/հազ. խմ**	***282.60***	***277.71***	***-4.89***

Սպառողներին վաճառվող բնական գազի միջին կշռութային սակագնի ձեւավորումն ըստ սպառողական խմբերի սպառման ծավալների ու սակագների

ներառյալ ԱԱՀ-ն

№	Անվանումներ	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հայտ		ՀԾԿՀ աշխատակազմի առաջարկ	
		Ծավալ (մլն խմ)	Սակագին	Ծավալ (մլն խմ)	Սակագին
1	**Ընդամենը սպառողներին վաճառվող բնական գազ**	**2 071.82**		**2 093.68**	
1.1	*Բնակչություն (բացի սոցիալապես անապահովների՝ տարեկան մինչև 600 խմ բնական գազի սպառումը)*	*634.51*	*135648.85 դր/հազ. խմ*	*731.81*	*143700.0 դր/հազ. խմ*
1.2	*Սոցիալապես անապահովներ՝ տարեկան մինչև 600 խմ բնական գազի սպառում*	*34.23*	*135648.85 դր/հազ. խմ*	*34.44*	*100000.0 դր/հազ. խմ*
1.3	*Ամսական մինչև 10000 խմ-ի շրջանակում սպառում (բացառությամբ 1.1, 1.2, 1.4 և 1.5 կետերի)*	*180.42*	*135648.85 դր/հազ. խմ*	*190.18*	*143700.0 դր/հազ. խմ*
1.4	*Գյուղ. ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցներ (նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը)*	*73.48*	*282.60 $/հազ. խմ*	*87.24*	*233.9 $/հազ. խմ*
1.5	*Գյուղ. ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող՝ պահածոների, խմիչքների և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող, անձինք*	*34.26*	*282.60 $/հազ. խմ*	*39.47*	*233.9 $/հազ. խմ*
1.6	*Ամսական 10000 խմ-ը գերազանցող ծավալի շրջանակում սպառում (բացի 1.1, 1.2, 1.4 և 1.5 կետերի)*	*1114.92*	*282.60 $/հազ. խմ*	*1010.54*	*265.81 $/հազ. խմ*
2	***Բնական գազի վաճառքի միջին կշռութային սակագինը***		***282.60 $/հազ. խմ***		***277.71 $/հազ. խմ***

Սպառողներին վաճառվող բնական գազի միջին կշռութային սակագնի կառուցվածքը



Բնական գազի սակագնում գազամատակարարման համակարգի ՇՊԾ, մաշվածության և շահույթի կառուցվածքը



Գազամատակարարման համակարգում մատուցվող ծառայությունների՝ գործող և ՀԾԿՀ-ի աշխատակազմի հաշվարկած սակագները (առանց ԱԱՀ-ի)

№	Անվանումներ	Չափի միավոր	Գործող սակագին	ՀԾԿՀ աշխատակազմի առաջարկ (2022)
1	Բնական գազի փոխադրման սակագին	*դրամ/ հազ. խմ*	7 790.832	6 776.137
2	Գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը	*դրամ/ հազ. խմ*	23.512	23.350
3	Բնական գազի բաշխման սակագինը	*դրամ/ հազ. խմ*	14 248.314	14 451.240

Սպառողներին վաճառվող բնական գազի՝ գործող, 2022թ. հայտով ներկայացված և ՀԾԿՀ-ի աշխատակազմի հաշվարկած սակագները (ներառյալ ԱԱՀ-ն)

№	Անվանումներ	Չափի միավոր	Գործող սակագին	"Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ-ի հայտ	ՀԾԿՀ աշխատակազմի առաջարկ
1	Բնակչությանը (բացառությամբ սոցիալապես անապահով սպառողների՝ տարեկան մինչև 600 խմ բնական գազի սպառումը) վաճառվող բնական գազի համար	*դրամ/հազ. խմ*	139 000	135 648.9	143 700
2	Սոցիալապես անապահով սպառողներին վաճառվող՝ տարեկան մինչև 600 խմ բնական գազի սպառման համար	*դրամ/հազ. խմ*	100 000	135 648.9	100 000
3	Գյուղ. ոլորտում գործ. իրականացնող՝ ջերմոցներին (նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը) և վերամշակող (պահածո, խմիչք և կաթնամթերք) անձանց վաճառվող բնական գազի համար	*$/հազ. խմ*	224.0	282.60	233.9
4	1-3-րդ կետերում չնշված մնացած սպառողներին (այդ թվում՝ ՋԷԿ-երին) վաճառվող բնական գազի համար՝ յուրաքանչյուր ամսում՝				
4.1	*մինչև 10000 խմ-ի շրջանակում սպառվող բնական գազի համար*	*դրամ/հազ. խմ*	139 000	135 648.9	143 700
4.2	*10000 խմ-ը գերազանցող բնական գազի համար*	*$/հազ. խմ*	255.91	282.60	265.81
	ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՎԱՃԱՌՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԻՋԻՆ ԿՇՌՈՒԹԱՅԻՆ ՍԱԿԱԳԻՆ	*$/հազ. խմ*	**266.71**	**282.60**	**277.71**

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ